

Պրոֆ. Գ. Ղափանցյան

ՄԻ ՔԱՆԻ ՀԻՆ ՈՃԵՐ ՈՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՋ

«Ուրարտուի պատմությունը» մեր աշխատության մեջ մենք ավել
ենք ուրարտական արձանագրությունների գաղափարական որոշ կողմերի
(կրոնական, ռազմական) ընդհանուր բնութագրությունը, ձգված է նմա-
նապես լեզվի պատմա-համեմատական (գեղեցիկական) վերլուծությունը:
Բայց բնագրերի պատմա-հասարակական ուսումնասիրության ժամանակ մեզ
պատահել են մի շարք ոճեր ու արտահայտություններ, որոնք կամ քիչ են
լուսարանված և կամ բնավ չեն լուսարանված, եթե չխոսենք մասնակի
սխալների կամ թերությունների մասին:

Այս հոգվածում մենք ցանկանում ենք կանգ առնել այն մի քանի
կարևոր գաղափարախոսական ընդհանուր ոճերի կամ արտահայտությու-
նների վրա, որոնք ի հայտ են գալիս ուրարտերենում, հավանաբար ռազմա-
կան արձանագրություններում, և հատուկ կարող էին լինել և այլ հին լե-
զուներին: Այս հասարակա-գաղափարախոսական մի շարք ընդհանուր ոճերն
ու արտահայտությունները արդյունք են որոշ մտածողության ու մտայ-
նության, կապված կրոնական, կուլտուրական և հասարակա-տնտեսական
յուր գարի ըմբռնումների հետ: Հետադարձում դրանք նոր բովանդակությու-
ններ են բնդունում կամ փոխարեքական նոր առումներ են ստանում: Մեր
այս հոգվածի գիտողությունները ունեն ոչ միայն գաղափարախոսական
նշանակություն յուր դարաշրջանի տեսակետից, այլև ընդհանուր բնույթ,
նյութ բնօրինակով որոշ չափով պատմագիտությունը, հասարակագիտու-
թյանը և թերևս գրականությունը՝ ոճի սոցիալական արժեքավորման տե-
սակետից:

1. buraštubi mesini-pii 'aldubi

Յուր տեղում մենք կանգ ենք առնել ուրարտական ռազմական արձա-
նագրությունների «Ծառայեցրի հարկի տակ ձգեցի» (buraštubi mešini-pii
'aal-dubi) ոճի վրա, որն այդքան հատուկ է ուրարտական արձանագրու-
թյուններին¹: Այդ ոճի վրա ուշադրություն էր դարձրել և 1. Friedrich-ը,
ասելով—«Man darf daraus wohl schliessen, dass ^(L⁵)buraštubi eine dem
mešini-pi 'albudi parallele, aber doch nicht mit ihm identische Handlung
bezeichnet» (տե՛ս Caucasia, Fasc. 8, էջ 149): Այստեղ «ծառայեցրի» (ու-
րարտ. buraštubi) բայը թեպետ ստեղծվել է bura «սարուկ» բառից, բայց
գործ է ածվում փոխարեքարար, քանի որ միշտ այդ ոճից հետո կարդում
ենք «հարկի տակ ձգեցի, արձակեցի տեղում» հարկ Սարգուրին տալու»:

¹ Տե՛ս՝ մեր «Ուրարտուի պատմությունը», էջ 109—112:

խակ դրանից հետո հաճախ նշվում է պարբերական հարկի չափը տասնյակ mana-ներով պղինձ, արծաթ, ոսկի և այլն: Երբ մի Դիաուցի կամ ժողովրդի թագավոր է այդպիսի կախվածություն մեջ բնկնում, իսկ ուղղակի արձանագրությունները հենց նման դեպքերն են հիշատակում, ապա «ծառայեցրի» տերմինն ունի հաատել իմաստ, այն է՝ անտեսական և քաղաքական կախվածություն Ուրարտուից: Այդ նվաճվող թագավորները դրանով դառնում էին Ուրարտուի վասսալներ կամ դաշնակիցներ: «Ծառայեցրի» բայը արտահայտում էր այդ ստամանակ միայն անտեսական և քաղաքական կախվածություն կամ ենթարկվածություն: Ուրարտական արձանագրությունները չեն ասում, թե այդ վասսալները պարագայում էին նաև զորք տրամադրելու Միայն «Յադլի տաշի» (Մանագլեկուրի մոտ) Մենուայի արձանագրության մեջ (տողեր 18—23) հարկի չափի հետ, որ պետք է վճարի Դիաույան Ուաուպուրս թագավորը, հիշատակվում են ձիեր, դոբր, հաց (?) և այլն, որ կարծես թե մտնում է այդ «ծառայություն» մեջ: Նույն այդ ոճը «ծառայեցրի» հարկի առկա ձգելը՝ զոյություն ունենալ, իհարկե, և ուրիշների մոտ: Համեմատել նաև հայոց «ընդ հարկաւ (հարկօք) տրկանել», որ տեսնում ենք մեր պատմագիրների մոտ: Ըստ Հայկազյան Բառարանի կմառանանշերնք — «զաշխարհն ի հարկի ծառայութեան կացուցին» կամ «արկ զնոսա Սողոմոն բնդ հարկօք ծառայութեան» և այլն: Երբ հայ նախորդները իրենց զորքով ու պարենով «ծառայութեան հարկ» էին տալիս հայ թագավորներին, ապա ֆեոդալական այդ բովանդակությունը տարրեր էր այն ցեղապետների «ծառայությունից», որ կար դրանց և ուրարտական թագավորների միջև: Որտեղ հետ ավելորդ չենք համարում նշել «սարուկ» բառի և դրանից ածանցյալ «սարկացնել, սարկանալ» բայի հետագա իմաստաշրջումը: Հայոց «ծառայ» բառը նույնն է նշանակել, որից «ծառայել», «ծառայեցուցանել»¹ և այլն, հեռո՛հեռու կորցնելով իրենց սարկատիական և ֆեոդալական առանձին բովանդակությունները, այժմ դարձել են նոր որակի բառեր (նման. մեր «ծառայել», «ծառայող» և այլն), ինչպես раб բառից ունենք работать և գերմ. arbeiten, կամ լատ. servus «սարուկ» բառից servitio «ծառայություն», կամ ռուսաց «служа» բառից այժմյան служить, служащий, служба և այլն:

2. ebanī atubī

Մենք խոսել ենք նաև խալդական ուղղակի արձանագրությունների «երկիրը կերա» ոճի մասին, որը զործ է ածվում, ըստ I. Friedrich-ի, և այլ հին լեզուներում: Այդ ոճը զործ է ածվում արձանագրությունների այն տեղում, ուր խոսվում է երկիրներ նվաճելու մասին, ավելացնելով «երկրները քանդեցի, քաղաքները վառեցի, երկիրը կերա (ebanī atubī), այր-գրս քչեցի Վան»: At-ubī բայի ճիշտ իմաստը հայանի դարձավ նորադուտ Սարգուրյան տարեգրերից, ուր երկու անգամ նույն դարձվածքներում փոխանակ ebanī atubī զործ է ածվում գաղափարապարհին ասված «ebanī կեթ (կեթԱկոթ)» կամ այդ նույնը ավելացած վերջում -bī բայական

¹ Համեմատել եղ է օրէն դիւցազանդ գայոց դիւցազանց գարմից բառնալ գկենդանութիւն կամ ծառայեցուցանել՝ ի սարկաց կարգի պահելու Այստեղ թի սարկաց պարզի պահել տառերը բացատրականն է «ծառայեցուցանել» բառի բովանդակությունը:

վերջավորությունը (կեթ-նի, այսինքն՝ կերա), որը հավասար է այլ բազմաթիվ գեղեցիկի atubi ձևին։ Այս ճիշտ գիտություններն արեց առաջին անգամ Մ. Շերեթիին։ «Ուսուցիչ» բայը կարող է իհարկե փոխարենարար դործ ածվել ամեն մի լեզվում, ինչպես մենք հիմա առում ենք «զյուխը կերավ»։ «այս բոլորը նա կերավ» (=մարսեց) և այլն և այլն։ Համեմատել նման փոխարենական առում՝ Փափասախի մոտ—«ես համակ զերկիրս հայոց զոցա [Մամիկոնէից] է կերեալ, մանաւանդ Մուշեղի» (տես Փ. Պատկանյանի հրատ., էջ 199)։ Բայց այս նույն առումը բայը ստացել է այլ սոցիալ-անասական բովանդակություն մեր միջնադարում, երբ կարգում ենք, օրինակի համար, «ես յայսմհեա է իշխան ես դու, Տէր Դաւիթ՝ Սիւնեաց եպիսկոպոս... զայդ շէնդ [Վերաշինիկ ի Կովսական գաւառի] ուսել և վայելել, պահել և տնել, զնոյ տալ և զբաւական զներ...» (տես Ս. Օրբելյանի Պատմ., Թիֆլիսի հրատ., էջ 210 և նույն ոճը 219 և 270 էջերում)։ Ուրարտական «երկիրը կերա» թեպետ դործ է ածվում սաղմական մտայնությամբ, որպես «կլանեցի, հափշտակեցի», բայց այնուամենայնիվ այդ հին ոճ է, մեզ այժմ խորթ ու անհասկանալի։

3. ABNU karchie

Մի բան կա ուրարտական սաղմական արձանագրություններում, որ մենք առաջարկում ենք հասկանալ որպես ոճային արտահայտություն։ Մենուս թագավորն առում է (տես Sayce, XXXII 4—7) — «զրավեցին [զորքերը] Շաղա ալյան երկրները՝ Շուրիշիլի քաղաքը, Թարխիգամանի քաղաքը, — աուրանի [քաղաքը], Շաղա ալյան ցեղին պառականոգ... -liei ABNU karchie KUR Xatinastani aptini»։ Այս վերջինը սկզբում պակասափոր է.—liei բառը անշուշտ քաղաքանուն է սեռական հոլովով, իսկ ABNU «քար» բառի զաղափարադիր կամ գեաներմիտարվին է։ Եթե նա առանձին բան է, այն ժամանակ միաքը կլինի՝ -li-ի քաղաքի բառը։ karchie խեթական երկրին պառականոգ։ karbi բառը այսուր արձանագրություններում դործ է ածվում առանց որևէ գեաներմիտարվի (որոշիչի), ինչպես՝ sarini karbi agununi manu gunusa xaubi («շրջակա հողը ամբողջած կովով վերցրի») կամ շինարարական արձանագրություններում՝ karbi salzi manu ui giei istini sidauri «հողը շեղջակույտ անելով՝ պարսպով ալսակը շրջապատեցի»։ Մենք առաջարկում ենք վերահիշյալ սաղմական արձանագրություն «այս ինչ քաղաքի ՔԱՐ karchie» տավածքը թարգմանել «քար (ու) հողը», այսինքն՝ աարածությունը։ Ս. Օրբելյանը հիշատակում է մի քանի դյուզանուններ «karb» տրամառով, ինչպես՝ Ուսակարը, Շիկակարը, Կարբինք Վերին, Կարբինք Ներքին, Կանակ Շիկահող դյուզանուն։ Ունենք նաև Կարբի դյուզանունը (Աշտարակի մոտ), որ դործ են ածել և վրացիք։ Օրինակ բորիի մոտ կա Karbi դյուզը (ըստ Քարակի)։ «Քար ու հող» ոճը դործ է ածվում գեո միջին հիմա էլ։ Աշտարակում անձամբ ենք լսել—«նրա քարն ու հողը չեմ ուզում», այսինքն՝ նրա հողային աարածությունը։ «Տարածություն» դժվար հասկացությունը մեր գյուղացիք այլ կերպ էլ չեն արտահայտել։ Այդ զաղափարը հողի, այսինքն երկրային տարածություն կոչվելու ոճով կամ արտահայտություն պետք է տրվել։ Երկնային աարածությունը կասվեր երեկ «օդ» կամ «երկինք» և նման բա՝ Տեղեկագիր № 3.—4

ոերով: Երբ տեղ-տեղ դեռ ապում է «հողով ջրով կորավ»¹, սա ևս սոցիալական կոնկրետ առումից է ածանցվել:

4. maani ardinini pieini

Մի հետաքրքրական ոճի ենթ հանդիպում ուրարական արձանագրությունների այսպես կոչված «անեծքի ֆորմուլայի» մեջ: Սովորաբար մեծ արձանագրությունները վերջանում էին այսպիսի անեծքով—«ով այս արձանագրությունը (քարը) ջարդի, ով ֆիասի (փչացնի), ով մի ուրիշի զրդի ասի՝ դնա ջարդի, ով այլ ոք ասի՝ ևս կանուցեցի... «հանցավորին» (սլարաավորին)» Խալդ. Տեյշերա (և) Արդինի աստվածները maani ^dUTU-ni pieini [կամ maani armuzii NUMUN NUMUN ^šU ^dUTU-ni peini]², որից հետո հաճախ ավելացվում է «թե (նրա) arxiuruliani-ն (=?), թե (նրա) inaini-ն, թե (նրա) naraa-ն (=սերմը, առնականությունը ?) avie-ululie (=ջնջեն), Բաղմաթիվ վարիանտներ են լինում այդ անեծքի ֆորմուլայի մեջ: Մեծ մասամբ երեք աստվածություններն էլ հիշատակվում են որպես պաածողներ, բայց երբեմն միայն Խալդ աստվածն է հանդես գալիս, ինչպես, օրինակ, Կողրանից զյուդի (ս. Ենորդ Լիկեցյու) Մենուայի արձանագրության մեջ (տես Սեյս XIX, Սանդ. № 77), ուր կարդում ենք միայն turinini ^dXaldi-e maani ^dUTU pieini «Պարաավորին Խալդ աստվածը...»: Սովորաբար անեծքի ֆորմուլան երկու մասից է բաղկացած լինում: Առաջին մասն է—«ով այս արձանագրությունը ջարդի... սլարաավորին Խալդը (Տեյշերան և Արդինին) ((և) այլ) աստվածները maani ^dUTU pieini»: Երկրորդ մասն է—«(և) թե arxiuruliani-ն, թե inaini-ն, թե nara-ն, ջնջեն»: Բայց երբեմն այդ երկուսը միանում են, ինչպես, օրինակ, Քելիշինի արձանագրության մեջ—«...Wer diese (Inscript) Tafel von der Stele weg verrück [ուրարա. suuidulie—ասուր. ida'ipuni], wer (sie) zerbricht, wer irgendeinem sagt. Auf! zerbrich [ուրարա. uli turii=ասուր. alik hipi], so sollen (dem Frevler?) Chaldi, Tešba, Ardini (und) die Gotter von Musasir seinen Namen vom Erdboden vertilgen»: Ա. Դյուստեի թարգմանության վերջին այս մասը ճիշտ չէ, որովհետեւ, ինչպես ճիշտ նշում է արիդրիսը, ուրարա. zilbi kiraedi kuludie նշանակում է «սերմը հողին (թող) հանձնեն»: Անեծքի ֆորմուլան յուրահաասուկ և միացած ձևով է հանդես գալիս Ռուսա II-ի Մակվի և Զվարթնոցի արձանագրություններում: Մակվի արձանագրության մեջ կարդում ենք «aluse ini DUB. TE tulie aluše pitulie aluše ipxulie turinini ^dXaldiše ^dTEŠEBA-še ^dUTU-niše DINGIR^u-še meku uī tīni manuni ^dUTU-ni kai»=«ով այս արձանագրությունը ջարդի, ով փչացնի (?), ով փշրի (?), սլարաավորին Խալդ, Տեյշերա և Արդինի աստվածները (նրա) meku-ն առնում թող որոշեն (ենթարկեն ?) Արև աստծու առաջ»: Kai բառը որոշակի նշանակում է «առաջ, առջև», գործ է ած-

¹ Լյուդիական մի արձանագրության մեջ ևս կա «հող ու ջուր» ոճը (տես P. Kahle und F. Sommer, «Die lydisch-aramäische Bilingue, Kleinasiatiscbe Forschungen B. I, էջ 81): Այդտեղ կարդում ենք—«ով այս կոթողը կամ այս զերեզմանը... փչացնի, նրա հանդեպ Արտեմիդան Եփեսոսի և Արտեմիդան Կոլոյի բակն ու տունը, հողն ու ջուրը, երկրային գույքը... Թող հողմացրիվ անեն»: Համեմատել հայոց «տուն ու տեղը» և «հողն ու ջուրը» նման արտահայտությունը:

² Այդպես է Խորխորյան վերջին արձանագրության մեջ (VIII Col.):

զույգ նաև սաղմուկան արձանագրություններում (Sarduri-kai, Menuakai...), համապատասխանելով աստուր. ina-pan («առաջ») նույն բառին, նույն կոնսպրուկցիայում (հմմա. նաև խեթ. ka «այստեղ» տես Sommer-Ehelolf, Papanikri, էջ 84), Առանձին կերպով է տրված անեծքի ֆորմուլան և Չվարթնոցի արձանագրության մեջ—սով այս արձանագրությունը չարդի, ով փչացնի, ով տեղից հանի, ով հողով ծածկի, ով ջրերը զցի, ով այլ ոք ասե՛ հա կառուցեցի, ով անունս ջարդի յուր անունը զնի, լինի նա բիայնագի, լինի լուրտինացի,— Խալդ, Տեյշերա (և) Արդինի աստվածները թե (նրա) անունը, թե առձեռ, թե սերունդը (սերմը) հողին թող հանձնեն։ Ինչպես տեսնում ենք, Չվարթնոցի և Մակվի Ռուսա II-ի արձանագրությունները տալիս են անեծքի ֆորմուլայի այս պարբերության մեջ գլխավոր նախադասությունը մեկ բայով, ինչպես այդ տեսնում ենք և Կելիշի արձանագրության մեջ։ Սովորաբար, ինչպես ասվել է, գլխավոր նախադասությունը երկու մասից (ստորոգյալից) է բաղկացած, առաջինն է «պարտավորին Խալդը (Տեյշերա և Արդինի աստվածները) maani ^dUTU pieini կամ maani armuzii NUMUN NUMUN sU ^dUTU-ni pieini», ինչպես Խորխորյան VIII կորոննայում։ Երկրորդ մասն է՝ թե arxiuruliani թե inaini թե սերունդը (nara ?) բնաջնջեն, Այս գլխավոր նախադասությունն ունի երկու ստորոգյալ—մեկը maani մյուսը՝ avie ululie, այսինքն միավորյալ է։ Առաջին մասը maani ^dUTU (-ni) pie(i)ni Իդոլուի Սարգուր II III-ի եփրատի վրա գրած արձանագրության մեջ փոխարինված է maani ardini-ni pieini ամբողջական հնչյունադրությամբ։ Ռուսա ^dUTU-(ni) դադարաբարդի, ինչպես վաղուց արդեն դիտվել է Սեյսի և այլոց կողմից, ուրարտական լեզվով համապատասխան է ardini(ni) բառին, որն ուրեմի պիտի նշանակի «արև» աստծու տեղական անունը։ Նման կոնսպրուկցիա կա և Մակվի արձանագրության մեջ, ուր ասված է manuni... ^dUTU-ni kai; այն տարբերությամբ, որ սովորական pie(i)ni հետդիրն այստեղ փոխարինված է kai «առաջ (առջև)» հետդիրով, իսկ սովորական maani բառը, որ մեր կարծիքով բայաձև է, փոխարինված է manuni նման բայաձևով։ ^dUTU-ni kai համապատասխան է հնչյունական ardinini-kai «արևի առջև», քանի որ սուսերական UTU դադարաբարդի արևի դադարաբանիչն է և փոխարինվել է Կուսուսուրի արձանագրության մեջ նույն կոնսպրուկցիայում՝ ardini(ni) ուրարտական բառով։ Իսկ ինչ է նշանակում maani, որ գրեթե միշտ գրվում է ma-a-ni, այսինքն a ձայնավորի կրկնություն։ Մենք առաջարկում ենք թարգմանել «տալ, շնորհել, ենթարկել» (համեմատել mani 'aldubi mešini-pii «ենթարկելով զցեցի հարկի տակ»)։ սովորաբար այդ mani-ն թարգմանում են «նրան», բայց բնավ հարմար չի գալիս։ Կա և manini բայաձևը, որինակ, Վանի Կուրշուն-Ջամի մ'կիթի Մենուայի արձանագրության մեջ—«Խալդուն տիրոջը Մենուայի Բշպուրինի որդին, այս կոխողը գրել տվեց manini ^dXaldini beedini ¹Menua ¹Išpuuniexinie ¹Inuspua ¹Menuaxinie ulguse pisuše alsuišee «որ շնորհվի Խալդյան բախտավորության միջոցով Մենուային Բշպուրինի որդուն, և Իսուշպուային, Մենուայի որդուն առողջություն, ուրախություն, մեծություն»։ Ռուսա ^dUTU-ni pieini ardini(ni) pieini թարգմանենք «թող շնորհեն (=հանձնեն) արևի տակ» (да повергнут пред солнцем), ձևականորեն սխալված չենք լինի։ Իսկ ինչ է նշանակում այդ ոճը, որ տեսնում ենք մոտավորապես և Մակվի արձանագրության մեջ։

գրութեան manuni... ^dUTU-ni kai (արեի առջև)։ Այս հնագույն գաղափարախոսական-մտայնական մի արտահայտութիւնն է. «զցել (մատնել) արեի տակ» կամ «զցել արեի առաջ» նշանակում է, մեր կարծիքով—ենթարկել դատաստանի կամ, այլ կերպ ասած՝ ենթարկել պատժի։ «Արե» հասկացութիւնը հնում նշանակել է նաև «արդար, արդարութիւն», «դատ, դատաստան», «դատաւարութիւն», պատիժ»։ Անեծքի փորձուլայի այս սպեցիֆիկ բժրոնումը մեզ հաճողից պոնել մասնավորապես նույն այդ ոճի գործածութեամբ խեթական արձանագրութիւնների մեջ։ Խեթական մի պայմանագրի խախտման համար որպես անեծք ասված է. «ով այս [պայմանագիրը] խախտի, նա պիտի լինի Տեշուպի... Արիննա քաղաքի արև աստվածուն... և որոք իմ աստվածների համար դատաստանի մօտ (Lu DINIM „ein Mann des Gerichts“)¹։ Դատաստանի մարդ լինել կամ դատաստանի տուջ պատասխան տալ համադր է նման հանցագործութեան ժամանակ պատիժ կրելուն։ Այնպես որ ուրարտական նման ոճը maani ardinini pie-ni (կամ ^dUTU-ni kai) նշանակում է «հանցավորին Խալդը... թող հանձնեն դատաստանին», որը տառացի գրված է՝ թող հանձնեն արդարութեան տակ (կամ՝ արդարութեան առջև)։ Pie կամ pii հետդիրը նշանակում է «տակ» (mesini pii «հարկի տակ», Menua pii «Մենուայի տակ» ձին այսքան ասպարեղ է վազում...), իսկ kai, ինչպես ասվել է, նշանակում է «առաջ»։ Ներկայանալ «դատարանի առաջ» կամ ընկնել «դատի տակ»—համադր արտահայտութիւններ են։ Ուշագրավ է այդ ընդհանուր հին ոճը, ուր դատ, դատարան, դատաստան, դատաւարութիւն և նման բառերը սովորաբար են «արե» (ardini) հասկացութիւնից։ Պրարարում անգամ ունենք «արեպակն արդար», երբ, ինչպես տեսնում ենք, արդարութիւնն ու ճշմարտութիւնը կարծես թե արեի փունկիցիաներն են։ Խեթերի մոտ արև աստվածը ամենօրյա արդար դատաստանն է կատարում (տես «Zwei hethitische Sonnenlieder», տպւած Kleinas. Forsch B. 1, էջ 390 և այլն), բարեկարգիների մոտ Շամաշը (արև աստվածը) դերագույն դատավոր է, երկնքի ու երկրի դատավոր է, Խամմուրային յուր օրենսգիրքը նվիրում է արև աստծուն։ Արդյոք իրանական arta—«ուզիդ, ճշմարիտ» և մեր ard-ar (փրաց m-arth-ali) բառերը չունեն ուրարտական ծագում, կտպւած ardini արև աստծու բառաձևի և փոխարեքական իմաստի հետ։

Ուրարտական պետութեան ժամանակաշրջանում ardini ոչ միայն արև աստվածն էր, ոչ միայն արդարութիւնն ու դատաստան էր նշանակում, այլև «օր», ինչպես թյուրքերենում gün նշանակում է և՛ արև, և՛ օր։ Դեռ ավելին։ Ուրարտուի մեջ որոշ քաղաքներ կոչւում էին ardini («արև» ?) անունով, ինչպես, օրինակ, ասուրական լեզվով հորջորջւած Musasir քաղաքը յուր Urzana (=հայոց «Արձան») քրմապետով և թագաւորով ուրարտերեն լեզվով կոչւում է Ardinu։ Հիշւում է էթիոնի (Կարսի նահանգ) երկրում նույնպես Ardinu քաղաք։ Հայ մատենագիրների մոտ հիշւում է Արդեանք քաղաք (Փափստոսի մոտ), Արտին լեռն թալինի մոտ (ըստ Ա. Շիրակացու)։ Համեմատել թերևս և այժմյան Արդիկ գյուղանունը, որ հիշա-

¹ S.E. Sommer, Heth. II, էջ 5. „wer ihn (sc. den Vertrag) aber umstürzt, der soll dem Tesup, dem Herrn, meinem Gebieter, der Sonnengottin von Arinna, meiner Herrin, allen meinen Gottern ein Mann des Gerichts (=d. i. zum Gericht überantwortet) sein“.

տակում է զեռ 1213 թվին մի վիճակաւ արձանագրութեան մեջ, գրված էմրատում (տես Ա. Լուստանյան, Վիճակաւ տարեգիր, էջ 144):

«Արեւ» բառը փոխարեւակաւ առումով շարունակում է դործ ածվել և այժմ, թեպէս որոշ գեղարոււմ ճիշտ միտքն արդէն միտպնած է երևում յոր հին իղեղողիայի տեսակետից: Օրինակ, եթէ մեղ համար զեռ հասկանալի են — արեւից մեռնեմ, արեւ վկա, արեւ գիտենա, արեւից սիրուն, արեւատ, մեկի արեւով խնդալ, արեւով երգվել և այլն, բայց արդէն անհասկանալի են դարձած — արեւի ձենն ածել (ս. Բնո, արեւից մեռնեմ՝ Աղասի, արեւից ձենն ածա՞ւ Խ. Արովյանից), արեւ մայր մտաւ, արեւ արքայութեան և նմանները:

Հետաքրքիր է «արեւ» բառի մի հին դործածութեանը խեղճակաւ մի թագաւորի (Մուփաատալ թե Սուպպիլուլիումա) և Կիգվատնա երկրի Շաւնաշուրա (Սունասուրա) թագաւորի միջև կնքած դաշնագրի մէջ՝ «Այն ժամանակ, երբ Իշուփա երկիրը՝ Արեւի ծառան թշնամութեամբ տողորվեց Արեւի զեռ լայսինքն խեղճակաւ հիշված թագաւորի զեռ», այն ժամանակ, Արեւս գիմեցի նրա վրա... Եւ Իշուփայի մարդիկ փախան Արեւիս առջևից Խուրրի երկիրն իջան...» (տես Ա. Լուստանյան, Հայաստանի սեպ. շրջ. պատմութեան, էջ 497): Նման մի բմբռնում կար և հետագայում՝ համեմատել Չերդ պայծառաւորութեանն, Ваше сиятельство և այլն:

Բողաղքայում (Hattusa) գտնված խեղճակաւ թագաւորների տրիւփում կարգում ենք ակկադական բնագրերում հետեյալ հետաքրքիր առգերը, որ վերարերում են անեծքին. «Այս տախտակի մի կրկնակը գրված է Արիննա քաղաքի Արե (Շամաշ) աստծու աստ, որովհետեւ Արիննայի Շամաշը [=խեթ. Hepit] գեկաւարում է թագաւորութեանը և թագուհիութեանը: Միտաննի երկրում նույնպէս մի կրկնակ գրված է Կախաաի քաղաքի «kurinnu»-ի տեր Տեշուպի առջև... Եւ ով որ Կախաաի kurinnu-ի տեր Տեշուպի առջևի այս տախտակը փոխե և մի այլ դադանի տեղ դնե, կամ կտտաւ, կամ տախտակի բովանդակութեան բառերը փոփոխե, այս դաշնագրի հիման կոչ ենք անում դադանիքի աստվածներին և այն աստվածներին, որոնք երդումի տերերն են...» Արանից հետո թվարկվում են այդ բոլոր աստվածները, թե խեղճակաւ և թե Միտաննի պետութեան. որոնց մէջ կնքված է այդ դաշնագիրը, ամելացնելով — «նրանք թող դաշնագրի այս խոսքերի հիման վրա ասած դան, նրանք թող հասկանան և թող վկաներ լինեն, եթէ դու Մաախուաղա և դուք Խուրրի մարդիկ չպահեք այս դաշնագրի խոսքերը... թող աստվածները, երկրի տերերը ձեզ ոչնչացնեն. ինչպէս մի դարու հատ իր ծիլով թող ձեզ քաշեն...», թող Էղեղի պէս քեզ ջախջախեն քո երկրից հետ միասին,՝ քո անունը... և սերմը (սերունդը) ցնջեն: Երկրից թող սառնամանիքի օթեան լինի և դուք արմատախիլ լինեք: Չեր երկրի հողը թող խեղճակաւ չախ լինի՝, որը փակված է. դուք նրանում բնկրդմիք և այլեւ դուրս չգաք...»: Մի այլ դաշնագրի մէջ նման ոճերին ամելացվում է «Եթէ ևս Մաախուաղա արքայորդիս և մենք խուրրի մարդիկ այս դաշնագրի և երդումի խոսքերը հաստատուն չպահենք, այն ժա-

1 Ակկադական այս բառը ունեն և հայերը ճահ-իճ կամ ճախ-ին անվան տակ (-իճ կամ -ին մասնիկով), որ 2 հնչյունը այնպէս է ամել հայերի մոտ «ճ», ինչպէս խեղճակաւ Zawall գեանունը դարձել է մեղ մոտ ճիւաղ ճիւալ:

մանակ... ինչպես մի մայրի ծառ, որ կտրված է և ոչ մի բնձյուղ չի արձակում, նման այդ մայրուն ես Մատիռուառա... և խուրդի մարդիկ... թող ոչ մի սերունդ (սերմ) չունենանք: Ինչպես մի աղբյուրից բխած ջուրը նորից անգիր չի վերադառնա, այնպես և մենք նման աղբյուրի ջրին չվերադառնանք մեր տեղը: ...Թող ձխի պես երկինք բարձրանանք: Ինչպես աղբ, որ ոչ մի սերմ չունի, այնպես և մենք... աղի մի աղուճակի (բեկորի) պես այլևս չվերադառնանք մեր անցերը» (տե՛ս *ibid.*, էջեր 490—491, 481—483):

Ավելորդ չի լինի սրանց կողքին բերել քրիստոնեական մտայնության հայ արձանագրություններից անեծքի մասը, որպես ավելի ուշ և նոր շրջանի ոճային արտահայտություն: Օրինակ՝ Թալինի 867 թվի արձանագրության մեջ կարդում ենք. «արդ եթէ այլ ոք հակառակել ջանա այլ աւելի ուսմ յուզէ: ՅԺԸ: սուրբ հայրապետացն նզուկ լիցի [=նշովեալ լիցի] և ի Ամրատա մահուամբ պատուհասի» (մեր ընթերցվածն է ըստ լուսանկարի): Կամ Կոթայ (Շողագայ) վանքի 901 թվի արձանագրության մեջ — «Եւ արդ եթէ ոք ձեռնարկէ յայս և յափշտակել ջանայ... և կամ գրահանայ ի պատ ընկենու: այնպիսեոյն բարձցի անուն յերկրէ և յիշատակն...» (տե՛ս Միմական տար., էջ 5): Կամ Դարակոփի վանքի արձանագրության մեջ — «Արդ մի ոք իշխեսցէ այսմ անսուտ վճռին և պայմանին բնոյգիմակաց լինել և խափանող, ապա թէ ոչ այնպիսին Յուդայի մասնչի մասնակից լիցի և մեղաց մերոց համարս տացէ յաւուր անեղ ատենին Քրիստոսի» (*ibid.* էջ 7): և կամ Մրենի արձանագրության մեջ — «Եւ որ ոք սաէ կամ յափշտակել, իմ մեղացս և իմ աղբի մեղաց պարտական եղիցի առաջի Աստուծոյ, և յԱստուծոյ դատապարտ եղիցի, և մասն և բաժին բնդ խաչահանս կրիցէ...» (*ibid.*, էջ 10): Այսպես կարելի է շատ վիպագրություններ բերել Հատկանշական են «անեղ ատենն» կամ «դատապարտ լինելն» ոճերը հայոց այդ նշովքներում, որոնք միանգամայն համապատասխանում են ուրարական *maani ardini-ni piei-ni* «թող մատնին դատապարտանին» («զցեն դատապարտանի տակ») նման ոճին այլ պատմական և գաղափարախոսական պայմաններում:

Խաղերենում անեծքի Փորմուլայի մեջ *turini* «պարտավոր» (հայց. հոլ. *turinini*¹) բառը գործ է ածվում միայն այն դեպքում, երբ հաջորդում է որպես ստորոգյալ *maani* ¹*UTU-ni pi(e)lini* (կամ *manuni mekuui tiini* ¹*UTU-ni kai* Մակիլի արձանագրության մեջ): Մերեմն դրանք կապ ունեն իրար հետ, որով մյուս դեպքերում, երբ անեծքի Փորմուլայի պարբերությի երկրորդ մասում (զվիսավոր նախադասության սկզբում) չկա այդ *maani ardini piini* («զցեն դատապարտանի տակ»), ապա պարբերությի առաջին մասում (երկրորդական նախադասության սկզբում) չկա և *turinini* «պարտավորին» (=մեղավորի) որեկտր, որին Խաղը և մյուս աստվածները պիտի դատապարտեն: Օրինակ, Զվարթնոցի և Կելիշինի արձանագրությունների անեծքի Փորմուլայում այդ բանը չկա որովհետեւ այնտեղ սկզբում չկա այդ *Turini*-ն, որին պարբերությի երկրորդ մասում համապատասխան լրացում լինեք *maani ardini piini*: Այդ երկու արձանագրություններում

1 Համեմատել *tur-ubi* «պարտավորեցր» խեթ. *tur* — «կապել», հայ «տուն» (=պարան, կապ):

շարադրման ձևը այսպես է — ով այս արձանագրությունը ջարդի... և ապա Տեյերա և Արդինի աստվածները (նրա) սերունդը հողին տան (կամ՝ թե անունը, թե առնձը, թե սերմը հողին տան)։

Կարծում ենք, որ միանգամայն հաստատված պիտի համարել մեր մեկնարանությունը *maani ardini-ni pi-i-ni* (= *maani* ^dUTU-ni *pieini*) ոճի թե համեմատական նման ոճի ուսումնասիրություն անսակեալից (համա- խելներեն՝ դոստոցովի մադ 11 նն) նույն կոնստրուկցիայում, թե *ardini* «դատաստան, արդարություն» նշանակություն տեսակետից, որ կա բոլոր հին լեզուներում, և թե *turini* «պարտավոր» բառի և *maani... ardini piini* ոճի մեջ եղած աղերսի կապակցությունը էլ չենք խոսում նման հին ոճերի մասին այլ հին (օրինակ՝ Աստվածաշնչում) ու նոր (հայոց) լեզուներից, ուր այդ «մեղավորներին» սպասում է միշտ «ահեղ դատաստանը» կամ «դատապարտությունը»։ Պատմա-իդիոլոգիական այս հնեարանությունը և համեմատական մեթոդը միասին վերցրած արդարացում են մեր այս մեկնարանությունը։

5. *Xaldini šurie* (կամ *Giš šurie*)

Ուրարտական ռազմական արձանագրություններում գործ է ածվում մի միապաղաղ սրբազան դարձվածք — «Ուրդը արշավեց յուր *šurie* նվաճեց *A* երկիրը, մատուցեց (*tekuni*) Արդիշու (Մենուայի, Սարգուրի) առաջ»։ Սրան ավելացվում է — Ուրդը *kuruni* (է), խաղյան *giššuri-ն kuruni* (է), երկու-երեք արձանագրությունների մեջ ունենք պարզ *šuri(e)*, ինչպես տեսնում ենք Սարգուրի 11(11)-ի Ձաղախում (Սեանից հարավ-արևելք) թողած արձանագրությունից — *«Xaldini uštabi masini šurie k runi»* ¹ *Arku* *kini KUR-nie* «Ուրդը արշավեց, յուր *šurie*-ն, նվաճեց Արդուկյան երկիրը»։ Այդպես է նաև Արդիշուի 1-ի մի արձանագրության մեջ (Կուլիջանում, Լենինականից հյուսիս-արևելք), ուր ասված է — «Ուրդն արշավեց, յուր *šurie*-ն նվաճեց Կուլիայան (¹ *kuliaini*) երկիրը» և այնու Բայց բոլոր մյուս զեպերում նույն դարձվածքի մեջ կարգում ենք փոխանակ *masini šurie* («յուր *s.*») քիչ փոփոխված *masini(e) giš-su-ri-e*, իսկ *«Xaldini giš-su-ri-i* գրությունը զեռ չունի պարզ *«Xaldini surii* տարբերակը, որը մեր կարծիքով պատահական է։ Այդ *giššuri* բառը թարգմանում էին «հզոր, հզորություն», «շատ, շատություն», կարծելով միամամանակ, որ *šurie* գրությունը զբա կիսապաղափարադիր և կիսահնչյունական գրությունն է, այսինքն կարգում էին *šU-rie*, ուր *šU* զաղափարադիրը տասուրերեն բնագրերում հասկացվում է «շատություն, բազմություն» [այդ սխալ է՝ *šU* զաղափարադիրը նշանակում է «յուր», «ձեռք» և «անդամ»]։ Այս մեկնարանությունը սկսվել է զեռ Սեյսից, իսկ ստուգարանորեն ցանկանում էին կապակցել ասուր. *gišru* «հզոր», արաբերեն *jasur* «առաքինի, հերոսական» բառերի հետ։ Իսկ մենք մեր մի հետադատությունից (Общие элементы между урарт. и хетт. яз., էջ 24-25) ապ ուրարտ. *giššuri* բառը ստուգարանորեն կապակցել ենք խեթերեն *kisar* «ձեռք» բառի հետ, թեպետ նույն գրքում (էջ 50, ծան. 1), առաջարկել ենք և մի այլ մեկնարանություն, այն է՝ կարգալ *Giš šuri* «դրոշ, նշան» (знамя, сигнал, стандарт) իմաստով։ J. Friedrich-ը հակված էր *giššuri* բառի մեջ տեսնել ենթակա, թարգմանելով միանգամայն էնթադրորեն (*„ganz provisorisch“*) «գործառ, ջոկտա» (*Schar*) նշանակու-

թյամբ Բայց նա հնարավոր էր դանում այդ gisšuri բառի ավելի լավ թարգմանություն, եթե վերոհիշյալ շարուն դարձվածքներից բացի մենք ունենայինք այդ բառի գործածություն հասար շատ և լավ հասկանալի օրինակներ։ Նա տարակուսում էր նաև, որ šurie (երկու անգամ) կամ šuri (մի անգամ) գրությունները գրչական սխալներ լինեն, բնորոշելով, որ այս գրությունների gis-šu-ri ձևի սկզբնական ցի-ռ կարելի է որպես որոշիչ (գեոերմինատիվ) հասկանալ¹։

Մենք առաջարկում ենք gis-šu-ri-i բառի սկզբի gis մասը չբնորոշել որպես բառի մաս, այլ որպես šuri բառի համար բացատրիչ-գեոերմինատիվ, ի նկատի ունենալով թե՛ երեք šuri(e) գրությունները, ուր այդ gis նշանը չկա, և թե՛ այդ բառի ուրույն գաղափարական դրվածքն ու նշանակությունը, կապված ուրիշ այլ նման դարձվածքների հետ, օրինակ, խեթերին լեզվում։ Այս կապակցությունը տրվում է նաև šuri բառի մի սուտ-գարանություն, որը կարող է ավելի հաստատել մեր այս պալեոնատոգրիական մոտեցումը։ Gis-su-ri-i «բառի» գրությունն անգամ վկայում է այն, մասին, որ սկզբի gis մասը բառին չի պատկանում, այլ որոշիչ է։ Ուրարտական բեկտայիր գրության մեջ մենք չենք հանդիպում միևնույն բաղաձայնի կրկնության։ Սինչև իսկ այնպեղ, որտեղ այդ պահանջվում է ձևավորանական անսակեթից, երկու (կրկնակ) բաղաձայնը լիք է ածվում մի պարզի։ Օրինակ, šid «կառուցել, շինել» արմատից անցյալ կատարյալ 3-րդ դ. հոգնակի պիտի լինեք šid-tu-(li) «կառուցեցին այն» (հոգնակի գեմք -tu մասնիկով և հոգնակի օրեկա -li մասնիկով), բայց հնչվել և գրվել է šitu-li։ Այդպես և zad-tu-li > zatuli (նույն իմաստով), zad-tu-me «ստեղծեցին—ինձ համար» դառնում է zatume և այլն։ Մինչև իսկ երկու gt բաղաձայնական խումբը դառնում է պարզ է, ինչպես տեսնում ենք kuig-uni «գրել ավել» բայց՝ kuig-tu-ni «գրել ավելին այն (-ni)» դառնում է kui-tuni։ Միայն մի դեպքում Լեհման-Հաուպտը բերում է այդպիսի կրկնակ բաղաձայնի գրություն—Tar-ra-i-ni-e ասածու անունը Սհերյան դուան արձանագրության մեջ, սակայն այդ գրությունը ես տարակուսելի է, քանի որ „tar“ նիշը մյուսները կարդում էին „xal“ (այդ նիշերը շատ նման են), այսինքն՝ xalrainie, իսկ այդ գրությունն ավելի հավանական է, ի նկատի ունենալով xallara ասածու առկայությունը խեթական պալեոնոմ (սխալ-լարա) աստվածը Դուննա քաղաքի)²։ Gis մասը սկզբում, անտարակոյտ, որոշիչ է հետևյալ šuri բառի համար, որը գրվում է և առանց այդ գեոերմինատիվի, իսկ gis-ը, որպես այդպիսին, սուբյեկտական գաղափարային է, «ծառ, փայտ» նշանակությամբ։ Հետևապես šuri բառը այդ gis (=Gis)³։

¹ „Eine bessere Übersetzung wird vielleicht einmal möglich sein, wenn die wenigen Belegstellen für gisšuri—ausserhalb der starren Formel (Sayce 50, 17. Tser. F 26) entweder vermehrt oder wenigstens besser verständlich gemacht werden. Ob die Schreibungen su-ri-e Sayce 61, 1. 82, 1 und su-ri CICH 129 d 1 (Tafel XXXI), 18 nur als Schreibfehler zu bewerten sind oder darauf hindeuten, dass ein Determinativ Gls anzunehmen und das Wort s u r i—bezw. Gisšuri—zu lesen ist, wage ich noch nicht zu entscheiden. Šku նրա „Einführung ins Urartäische, Leipzig, 1933, էջ 47.

² Տես, օրինակ, Նուրրիլույիումայի և Մատաիուդայի դաշնագրության մեջ (Ա. Քաշարյանի մոտ, էջ 482)։

³ Գաղափարայինը, թե որպես ասանձին բառեր և թե որպես որոշիչներ (գեոերմինատիվներ) գրվում են մեծատառ։

բացատրականով պետք է պատկանի մի որևէ առարկայի՝ փայտից շինած։ Իսկ Թնչ կարող է նշանակել այդ suri-ն, որպես փայտյա մի արտադրություն։ այդ մենք ցանկանում ենք պահել և հաստատել ռազմական այդ ոճի առկայությունը։ այլ հին լեզուներում (սովյալ զեպրում խեթերենում), թող թե դրա (šuri-ի) ստուգարանությունը, որը նույնպես հաստատում է մեր այդ պատմա-պալեոնտոգրիական մոտեցումը և անալիզը։

Խեթական Մուրշիլ II թագավորի տասն տարվա ռազմական գործողությունների նկարագրության մեջ մի հետաքրքրական հին ոճ ու արտահայտություն ենք կարդում, կապված հավատալիքի հետ։ «Երբ ևս արշավեցի» որը Lawaša սարը բարձրացա, Տեշուպ աստվածը, հերոսը, իմ տերը, հաստատականություն (կամ խնամք)՝ ցուցաբերեց և «Kalmi-ša-na-an երեացրեց. (այդ)՝ «kalmisan-ը իմ գործը (կամ բանակը) տեսավ (uškit), Arzawa երկիրն էլ նրան տեսավ. «kalmisanas-ը զնաց, Arzawa երկիրն հարվածեց (walah-ta «բաղխեց», Uhha-CALU-ի [= Ոխ մարզում ?] Apaša յադարը հարվածեց, Uhha-GALU-ին ծնկի վրա նստացրեց, և նա հիվանդացավ (սես Լուգնու Hethitische Keilschrifttexte aus Boghazkoi, տպված Boghazkoi-Studien սերիայի 3-րդ գրքում, Էյսս 184)։ Լուգնու «kalmisan գոյականը հասկանում էր որպես «անոթ» (Gerät) կամ «ծառ» (Baum)՝ Ակկադերեն išu ցույց է տալիս «ծառ», բայց և «փայտ»։ հիմա գրում են այդ պապարանիչը Glš „Holz, Baum“ (determ. Cis vor Holzern, Geräten, Baumnamen, սես Sommer-Ehelelf, Papanikri, էջ 85)։ Այդ պապարանիչը գրվում է նաև բույսերի և թփերի առաջ, ինչպես, օրինակ, «širdu „можжевеловый“, ցրդի, ցրդենի» կամ Glš GEsTIN «թուփ (ծառ) գինու» (խաղողի թուփ) կամ Glš hassika, որ, ըստ իս, մեր «հասկ» բառն է, այսինքն՝ բույսի մի մասի առաջ ևս գրվում է այդ Glš (=ակադ. isu) պապարանիչը։ Այս նկատառումով խեթական Glš kalmi-ša-na բառը մենք համարում ենք կամ ինքը kalmisana բույս (թուփ, ծառ) կամ գրանցից շինած մի որևէ գործիք։ Իսկ այդ kalmisana-ն ինչ կարող էր նշանակել։ Մեզ համար անկասկած է դրա «եղեգ» (камыш) նշանակությունը, ի նկատի ունենալով այդ kalmisana բառի kalm արմատը՝ որ մենք տեսնում ենք մի շարք լեզուներում — հուն. καλαμ «ցողուն, ծղոտ», καλαμός «եղեգ», լատ. calamus (id.), գերման. Halm «ցողուն, ծղոտ» (стебель травянистых растений и злаков), արաբ. kalam «եղեգնյա գրիչ» և այլն։ Այս kalm (kalam) արմատը («եղեգ, ցողուն») մեզ թվում է ոչ հինդ-դերոսական նախ իրեն իմ վերջավորություն պատճառով (հնդերոսականում երկու սոնանտ իրար կից չեն կարող լինել) կամ -ala- (kalam) լիակայնավորության (полногласие) պատճառով։ Էլ չեսք ասում այն մասին, որ

¹ Խեթերեն այդ բառը հնչում է para handandatar, որը Ստուրտեվանտը թարգմանում է «control, numen», Մենք դրա կրկնակ բունը համեմատում ենք հայոց «յանձանձանձ» բայի հետ, որ նշանակում է «հոգ տանել» (սես Хеттские боги у армян, 1940 թ., էջ 12)։

² Ծանոթության մեջ նա ասում էր — «kalmisanas ist, wie das Determinativ zeigt, ein Gerät (eventuell ein Baum). Սես նույն տեղում, էջ 183, ծան. 9։

³ Kalmisana — բուն է, որից ուղղական հսկողը կլինի kalmisanas, հայց. հուս. kalmisanan։ Արմատն է, անտարակույս, kalm- մասը, իսկ -isan (կամ san) մասը մեզ անձանթ վերջածանց է։

վրացերենում *ես կա calami* (թիժալամի)՝ բառը «վազի էտած ճյուղերը» (оф-
резки лоз «արքատ»), որն անշուշտ ստացվել է *kalam* հին ձևից՝ Իսկ Խնչ
պետք է լինե՞ր ամպրոպի խեթական Տեշուպ (=խեթերեն Datta) աստծու
ձեռքին, որպես թշնամուն պարնելու մի գործիք, որից հիվանդանում է
թշնամու իշխանավորը՝ Այդ գործիքն իբրև թե երևացել է թե խեթական
և թե թշնամու զորականների աչքին, այդ գործիքով Տեշուպը խփում է և
այլն։ Մենք չենք կասկածում, որ դա եղ․գլխա գտնված է։ Հենց ուսուց
трост «ձեռնափայտ» բառը սկզբում նշանակել է «եղեգ», ի նկատի ունե-
նալով դրանից կազմած тростник «եղեգ» այժմյան բառը։ Համեմատել
Աստվածաշնչի «եղեր գառազան եղեգնեայ», կամ «տուաւ ինձ եղեգն նման
գառազանի», կամ «ի ցուպն եղեգնեայ ջախճախեալ» և նմանները։

Այժմ դանք ուրարտական արձանագրությունների մեջ պատահող
նման ոճին, ուր խեթական Տեշուպին՝ փոխարինում է Խալդի աստվածը և
Gis kalmisana բառին փոխարինում է Gis šuri բառը։ Ուրարտական արձա-
նագրություններում ևս Խալդին արշավում է (Xaldini uštabi), շուր *šurie*-ն
(masinie Gis šurie) նվաճում է (karuni) այս կամ այն երկիրը, նվիրաբերում
թագավորին։ Սրանից հետո շնորհակալ արքան բացականչում է „^d Xaldini
kurun(i), ^d Xaldini Gis šurii kurun i“, որ հավանորեն նշանակել է՝ «Խալդին
ոգորմած է, Խալդյան չուրի-ն ոգորմած է»։ Տարակույս չկա, որ այդ šuri
բառը, որն ունի սկզբում մեծ մասամբ «բուսեղեն, փայտեղեն» զապափա-
րանիչ-որոշիչը, նշանակել է «եղեգն» և հետո՝ եղեգնյա ցուպ (զավազան)։
Ստուգարանորեն անգամ այս կարելի է ապացույցած համարել, ի նկատի
ունենալով զրաբարի «շուարն» բառը (հույն․ շուառունք), որ նշանակել է
«ձող կամ մական խալու․ սլաք, նիզակ ձիաւորի»։ Այս բառը ղնչվում է
նաև «շաւառն», պահելով ավելի հին իմաստ՝ ցորենի ծղոտ, մի տեսակ
եղեգ, լեհական խոտ, որից յուղ է հանվում։ Հին Այուսիքում կար մինչև
խալդ․ Շուառնահոյ անունով գյուղ։ Մեր կարծիքով՝ հին šur արմատը դար-
ձել է հայերի մոտ šuar(n) և հետո լիաձայնությամբ šawar, ինչպես հին
շուք «ստվեր» բառը մեր բարբառներում դարձել է «շուաք» կամ ակեա-
ղերեն dūru «պատ» բառը քրդերենում ղնչվում է aivar։ Համեմատել
«Առուեղեան» տահմանվան փոխակերպումը «Առաւելեան» ձևի լիաձայնու-
թյամբ։

Տվյալներ կան, որ ուրարտական šuri բառը կարող էր նշանակել ոչ
միայն «ձող, մական, զավազան», այլև «նիզակ, դենք, նետ», ինչպես հա-
յոց շուառն բառն է այդպես նշանակում (մական, նետ, նիզակ)։ Սար-
դուրի Իդողլուի արձանագրության մեջ (տող 17) կարդում ենք՝ «քաղաք-
ները վառեցի, 50 Gis šuri gunišini šatuubi gunusinini bidiadi baadgulubi»։
Այս մասը մոտավորապես նշանակում է՝ «50 նիզակ ուղմական (կովի)
բունեցի (=վերցրի, захватил)», իսկ վերջին մասը՝ gunusinini bidiadi bad-
gulubi լավ չի հասկացվում (badgulubi = հարվածեցի)¹։ Այս šuri gunušini
«նիզակ (զավազան) ուղմական (— ուղմի)» արտահայտությունն ունենք
և Վանի Նիշայի Սարդուրի V արձանագրության մեջ (զրված է Նիշայի
հետևի պատի վրա ցածից), որտեղ (9-րդ տող) կարդում ենք՝ 2114 BE.LI

¹ Թերևս՝ մարտիկներին հարվածեցի․ bidiadi բառը անհասկանալի է («ներքից» չ,
հետո ? !):

6. xasial-me տոսվածներ

Ուրարտական ուղղական արձանագրությունների սովորական շարադրությունն է — «աղոթեցի (xuṣiadi ?) Պարդուն (Xaldidi) տիրոջը, Տեյշերային, Արդինուն (և) աստվածներին Բիայնայի, տիրոջական մեծությունը ևս aliabadi (բայ է), xasial-me աստվածները»։ Այս սովորականի վրա ափսոսանքով է երբեմն «պատրաստեցին ինձ համար ճանապարհ»¹ (zatu-me xarie)։ Այս ոճերն տնչուշտ հին գրական-իդեոլոգիական սրուշ ասույթներ են և պիտի լինեն և այլ լեզուներում։ Խեթերենում մենք կարգում ենք նմանը — «ինձ արև աստվածունհին Արիննա քաղաքի իմ տիրուհին, Տեյշուպը — հերոսը, իմ տերը, Մեղուլլան և բոլոր աստվածները piran huweir («ընդառաջ վաղեցին»)։ Այդ վերջինը նշանակում է փոխարեքարար «օգնեցին, օգնություն եկան» (standen bei, zu Hilfe kamen)։ Նույնն է նշանակում, ինչպես արդեն դիտվել է ուրիշների կողմից (Ֆրիդրիխ և մյուսները) և խալդական xasial-me «օգնեցին» (xasial) ինձ (-me)»։ Ստուգարանորեն և իմաստարանորեն դրանք նման էլակեա ունեն։ Խեթերենում hu(w) արմատը նշանակում է «վաղել»² (piran huw — «առաջ վաղել»)։ Խալդական xasī բայարմատը, ըստ իս, նման կաղմություն ու իմաստ ունի, կապված «առաջ գնալ, շուտ հասնել» նշանակությամբ հետ։ Ստուգարանորեն հասկամատել հայոց has արմատը (hasանեմ), որը երբեմն հենց այդ օգնություն միտքն էլ է տալիս, ինչպես «երազանաս սուրբը» նշանակում է «շուտ հասնող», վրա հասնող օգնություն համար։ Ուշագրավ է օգնություն եկող եռաստվածությունը թե խեթական և թե ուրարտական արձանագրությունների մեջ։ Խալդերի մոտ եռյակ աստվածությունը հիշվում է նաև անեծքի Փորմուլայի մեջ, որպես պիտավոր և պատժող աստվածներ (տես վերը)։

* * *

Համառոտ կերպով կարելի է մատնանշել և այլ ընդհանուր հին ոճեր ու արտահայտություններ։

Ուրարտական բնագրերում կարգում ենք «եկավ այսինչ թագավորն իմ առաջ, խոնարհվեց (sulustili), բռնեց ոտքերը (šatuali kurieli)» և այլն, իսկ մի դեպքում Sardurini kurieli šatuali «Սարդուրյան ոտքերը բռնեց»։ Համեմատել խեթական GIR mes katta haliat կամ ակկադական GIR pl išbat «ոտքերը բռնեց»։ Կա և «ոտքերը համբուրեց» կամ «ոտքերի տակը համբուրեց» — մի ոճ, որ վերջերս դեռ գործ էրածվում և հայերիս մոտ։

Ուրարտերենում երկու դեպքում կարգում ենք — «այսինչ երկիրը badṣulubi zašgubi» (տես Apx. Զեք., III 22—24, V 27), որը մենք բարդ-

թե մետադից։ Համեմատել այդ տեսակետից իմաստական նման շրջում ի գեմա հայոց «նեւ» բառի և սանսկը. nadā — «եղեգ», հին իրան. nad և նոր պարսկ. na «եղեգ» բառերը մեջ (տես Habachmann, Arm. Gram., էջ 478)։ Համեմատել նաև՝ շուտոն («շուտ, եղեգ») և շուտոն «ձող», ուրա, նիզակ» նույնաձայնում բառերի իմաստաշրջումը, որոնց մասին կասվել է բիշ վերեր։ Ակկադերենում ևս «եղեգ» բառից առաջ կար «փայտ» որոշիչը (KU), աես, օրինակ. Bogh. st. III, էջ 6.

¹ Xarie (xare) բառը պատահում է Սարգուրի աննայներում և Կեիշինի արձանագրության մեջ (xariedi)։ Ըստ իս «Պարբերդ» նշանակում է «ճանապարհարդ»։

² Այստեղից է հայոց apa-hov, որ տառացի նշանակում է վտանգից «հեռ» փախած, отстраивившись։ Խեթական apa «հեռ» նախածանցով են և ապաշուել, ապաբէն, ապաբէն բառերը, որպես խեթերենից վերցրած բառեր։

մանում ենք թրաքս, սպանեցիք, որ հիմա էլ մենք գործ ենք անում։ Համեմատել խեղդերեն «խեղդանալ» խեղդի (hullanun) և նրան (nan-kan) սպանեցի (kuenun) կամ Gašga քաղաքը ևս հարվածեցի (tarahhun) և նրան սպանեցի» (տե՛ս B. St. III, էջ 232, 208)։ Հրոզնին kuenun թարգմանում էր «ոչնչացրի» (ibid.), բայց հետո ուրիշներն այդ թարգմանում էին «սպանեցի» բայաձևով։ Խեղդերենում badg արմատին համապատասխանում է vatk «խփել» («խփե՛կ եղբ մի մարդու խփի», տե՛ս Code hith., հրոզնու հրատ., էջ 150—si un taureau un homme saillit...): Իսկ ուրարտերեն zaš-gubi որոշակի նշանակում է «սպանեցի» — aliki zašgubi aliki šexiri (կամ TI, II-LA) agubi «ամանց սպանեցի, ամանց կենդանի տարա» շարուն և շատ գործածական արտահայտություն մեջ։ Այս badgulubi zašgubi¹ «խփեցի, սպանեցի» ոճին շատ նման է հայոց «չուեալ խաղալ գնալ», «եկն եհա», այժմյան «մեռավ պրծավ» և նման բարդությունները։

Տարեգրությունները մոտավորապես միասնական են վերջանում խեթական և ուրարտական սուղմական արձանագրություններում։ Օրինակ, Մուրշիլ II-ը յուր ամեն տարվա սուղմական գործողությունները վերջացնում է ընդհանրապես այսպես — kii INA MU 1 KAM ianum (կամ KAK-nun)² «այս (բանը) մեկ տարում ևս կատարեցի»։ Խաղական արձանագրություններն ևս այսպես են վերջանում — inanili arniusinili 1 MU (կամ susini tsali) zadubi «այս գործերը մեկ տարում կատարեցի»։

* * *

Մենք այս փոքր աշխատության մեջ հին ուրարտական ոճերն ու արտահայտությունները պատմա-համեմատական և իդեոլոգիական վերլուծություն ենթարկեցինք զուտ պրակտիկ նկատառումով, այն է՝ կարողանալ հասկանալ որոշ դժվար և ցայժմ անմեկնելի տեղերը։ Այս ունի լեզվական (ուրարտագիտական) և ընդհանուր նշանակություն՝ ոճի սոցիալական-պատմական ըմբռնման և էվոլյուցիայի տեսակետից։ Մի գրական գործ կատարված կլիներ, եթե մեր գրաբարի և այժմյան բարբառների լեզվական շտեմարանից հավաքվեին հավաքակա այդ հնագույն և մեծ մասամբ մեռած ոճերն ու արտահայտությունները, որպես նյութ պատմա-իդեոլոգիական մի լավ հետազոտություն։ Համեմատական մեթոդը եթե ճիշտ կերպով գործադրվի, ի նկատի ունենալով դարաշրջանների մոտավոր հասարակատնտեսական, կուլտուրական և մանավանդ դադափարախոսական բնույթները գրությունը, մեզ կտա որոշ ձևաբերումներ մեր հայկական հին հատարակամոտայնություն դարպացման առարկայում։ Իսկ սա ունի և ընդհանուր գիտական նշանակություն։ Երբ խեթական և այլ հին բնագրերում առկա է «երբ իմ հայրը աստված դարձավ», սա մեզ համար, այժմյան հակացուցությունների տեսակետից, միանգամայն անհասկանալի և անմեկնելի է։ Այս նշանակել է՝ «երբ իմ հայրը մեռավ» և հավանորեն այս ոճամոտայնությունը վերաբերել է միայն վերին բարձր (թագավորական, իշխանական) խավերին։ Երեխ աշխտեղ է, որ թագավորն իրավունք ուներ

¹ Badgulubi ձևը առանձին գործ է անվում միայն մի գեղքում, այն է՝ Սարգուրի Իդրդուի արձանագրության մեջ — «50 նիզակ բռնեցի (և) մարտիկներին (gunusmini) bi-diadi (?) խփեցի» 17—18)։

² Տե՛ս, օրինակ, B. St., III, էջ 220 և այլն։

դասվելու աստվածների շարքը, — և հետևապես դժվար թե այդ ոճը դորձադրվեր հասարակ մարդու նկատմամբ, իսկ այս բանը վկայում է իշխող մաայնություն մասին յուր դասակարգային հասարակության մեջ: Հետագա քաղաքակրթությունը, ելած այլ նկատառումից (էլֆեմիդից և կուլտուրական նրբանկատառումներից), նույն «մեռնել» հասկացությունը կամ երևույթը այլ ոճերով ու բառերով է արահայտում՝ յուր ըմբռնումներին հարմար, ինչպես ֆրանսերենում սովորական mourir-ը փոխարինվում է perir (կորսվել), passer (անցնել), trépasser (նույնը), déséder (հեռանալ), s'endormir («ночить», հանգստանալ), rendre son ame «հոգին տալ» (հին ոճ է), partir կամ s'en aller (հեռանալ-գնալ) և այլն և այլն: Նմանը համեմատել գերմաներենում, ուր սովորական sterben (մեռնել) բայը փոխարինվում է vergehen (բառացի՝ уйти, գնալ), erblassen, verbleichen (բառացի՝ գունաթափվել), dahingehen («գնալ այնտեղ»), dahinscheiden («հրաժեշտ տալ») և այլն: Ամեն դար կարծես թե յուրն է մացնում, մի գեպում շեշտվում է, ինչպես «մահվան» խնդրում, կապը հանդերձյալ աշխարհի հետ (հմտ. դրարարի՝ յաւելաւ առ հարս = մեռավ) բարձր անձանց մեծացումն աստվածացնելու միջոցով (տաճարներ էին շինում նրանց հար, տալիս են որոշ պատկերացումներ և այլն, իսկ մյուս գեպում մահվան ծանր պատկերն ավելի մեղմացման է ենթարկվում, մեռնել բայը համարվում է կոպիտ արտահայտություն, ոչ հարմար դարի քաղաքակրթ շուրր արտահայտություններին և այլն: Մենք մեր «Ուրարտուի պատմության» մեջ շեշտել ենք, որ հնագույն շրջանում կային բառեր ու ոճեր, որ տրվում էին միայն աստծուն և բառեր ու ոճեր, որ տրվում էին մարդկանց:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, «Ուրարտական մի քանի հին ոճեր ու արտահայտություններ» մեր այս փոքրիկ աշխատությունը որոշ նյութ է տալիս թե ուրարտերենի և թե ուրարտագիտության ուսումնասիրության ճիշտ գիտական դրվածքին, այլև կարող է ունենալ բնդհանուր գիտական կողմ, հատկապես ոճի գաղափարախոսական պատմա-հասարակական ըմբռնումների տեսակետից: